ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
23	Էքսիտո	Էքսիտո	Էքսիտո	Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ (L x Խ x Բ): Գրապահարանը պատրաստված է էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Ապահովվում է էսթետիկությունը,

				մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Ապահովվում է էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ։ Գրապահարանը ունի 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են եզրերը մշակված, թափանցիկ երկփեղկ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով։ Բոլոր դռները ունենան մետաղական օվալաձև բռնակներ։Դարակները պատրաստված լամինացված 18 մմ հաստության E0դասի ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվում են 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC)։ Աշխատանքային հարթությունը անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի)։ Բոլոր միացումներն իրականացնվում են թաքնված ամրակցումներով։ Գրապահարանի հետնապատը 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն E0դասի ՓՏՍ գույնի։ Պահարանը ամբողջ պարագծով ունի շրջանակաձև ոտքեր։ Ոտքերը՝ կարգավորվող։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 300 x 100 մմ (Lx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից ամրացվում են պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի

				հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն։ Մակնշումը կկատարվի հայերեն, ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
23				